

Բանալի բաներ՝

վարկ, տոկոսադրույք, ֆինանսական միջնորդություն, բանկային համակարգ, դրամավարկային քաղաքականություն:

Տտեսական հարաբերությունները մշտապես զարգանում են՝ իրենց հերթին մեծացնելով ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջարկը: Մերօրյա հասարակությունում ֆինանսական միջոցների հնարավոր աղբյուրներից առանձնանում է վարկավորումը, որն աստիճանաբար ընդլայնում է իր կիրառման ոլորտները: Բայց հանդիսանալով տարաբնույթ տնտեսական ծրագրերի կյանքի կոչման, բարեկացության ավելացման, հնարավորությունների օգտագործման միջոց՝ այն նաեւ հանդիսանում է ֆինանսական պարտավորության առաջացման աղբյուր:

Հարկ է նշել, որ վարկային ռեսուրսները տարեցտարի դառնում են ավելի հասանելի եւ դրա մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը 2010-2015թթ. ընթացքում ավելացել է մոտ երեք անգամ եւ միջին տարեկան աճի տեմպը կազմել է մոտ 17%, իսկ 2016թ. սկզբին փողի զանգված/ՀՆԱ ցուցանիշը ավելացել է 1.3 տոկոսային կետով եւ կազմել է 38.4%: Բանկային համակարգը ցուցաբերել է բավականին դինամիկ զարգացման միտումներ եւ վերջին ութ տարիների ընթացքում ակտիվների միջին տարեկան աճը կազմել է մոտ 21%, վարկերինը՝ 22%՝ աճելով մոտ հինգ անգամ: Այդ նույն ժամանակահատվածում վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 19%-ից մինչև 42%², իսկ բանկերի վարկային պորտֆելի միջին տարեկան աճը կազմել է 30%: Երեւույթն ունի ինչպես դրական, այնպես էլ խնդրահարույց հետեւանքներ: Դրական հետեւանքները բազմաթիվ են եւ արտահայտվում են տնտեսական տարբեր ցուցանիշների աճով: Բայց մյուս կողմից՝ վերջին շրջանում ականատես ենք լինում նաեւ չաշխատող վարկերի տեսակարար կշռի ավելացմանը (նախորդ տարեվերջին այն կազմել է մոտ 7.5%): Խնդիրը գոյություն ունի, որի առաջացմանը նպաստել են մի կողմից տնտեսության հետզհետեւ մային վիճակը, իսկ մյուս կողմից էլ ցածր վարկարժանությամբ փոխառուների վարկավորումը: Պետք է նշել նաեւ, որ խնդրի լուծման նպատակով արդեն իսկ իրականացվել են համապատասխան փոփոխություններ բանկերի գործունեության կարգավորման դաշտում՝ բարձրացնելով որոշ վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստին հատկացումների դրույքները եւ ռիսկի կշիռները, ինչպես նաեւ կապիտալի պահանջը: Վերը նշված ժամանակահատվածում բավականին նվազել է նաեւ արտարժույթային վարկերի տոկոսադրույքը, չնայած այն մտահոգիչ հանգամանքի, որ վարկերի դրվարիզացիայի մակարդակը 2015թ. կազմել է մոտ 67%:

Ընդհանուր առմամբ՝ վարկավորման ծավալների աճի կամ նվազման վրա էական ազդեցություն ունի տոկոսադրույքի մեծությունը: Վարկային տոկոսադրույքը հանդիսանում է մի կողմից փոխառու միջոցների ձեռք բերման, մյուս կողմից էլ այդ միջոցների տրամադրման ռիսկի փոխհատուցման եւ ծառայությունների մատուցման գինը: Փոխառուները սովորաբար՝ պատրաստ են վճարել ֆինանսական միջոցների ձեռք բերման համար լրացուցիչ գումար՝ տոկոսի տեսքով, իսկ փոխառու կազմակերպությունները պատրաստ են տրամադրել այդ ֆինանսական միջոցները՝ եկամուտ ստանալու ակնկալիքով: Այսպիսով տոկոսադրույքը գործարքի մի կողմի համար հանդիսանում է եկամտի աղբյուր, իսկ մյուս կողմի համար՝ ծախս:

Վարկային տոկոսադրույքի ձեւավորման վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել մի քանի կարեւորները: Նախեւառաջ՝ վարկային տոկոսադրույքի ձեւավորման վրա ազդող էական գործոն է հանդիսանում ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքի մեծությունը: Որքան այն փոքր է, այնքան ավելի էժան կարող է լինել բանկի կողմից տրամադրվող վարկային միջոցը եւ հանկուհանկ: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ առեւտրային բանկերում 2015թ. մինչև 1 տարի ժամկետով ՀՀ դրամով ավանդների միջին տոկոսադրույքը կազմել է մոտ 14.1%, իսկ ԱՄՆ դոլլարով 5.7%, իսկ երկարաժամկետ հատվածում՝ համապատասխանաբար 14.3% եւ 7.2%: Նշենք նաեւ, որ 2016թ. ավանդային միջոցների դիմաց վճարվող տոկոսադրույքներն ունեցել են զուսպ նվազման միտում: Մասնավորապես՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին 1 տարուց ավելի ՀՀ դրամով ավանդների միջին տոկոսադրույքը կազմել է 12.8%, իսկ ԱՄՆ դոլլարով՝ 7.0%:

Բացի ավանդի տոկոսադրույքից, գոյություն ունեն նաեւ այլ գործոններ, որոնք են ազդում են վարկային տոկոսադրույքի ձեւավորման վրա: Դրանցից կարեւորներից է ռիսկի դիմաց վճարը: Ավանդային է, որ փոխառու կազմակերպությունները դիմում են ռիսկի, քանի որ հնարավոր է, որ փոխառուն չկարողանա վերադարձնել կամ էլ վերադարձնել մասամբ արժեզրկված դրամական միջոցներ: Նման երեւույթի պատճառ կարող է լինել բարձր գնաճը, որի պայմաններում, երբ որոշակի ժամանակահատվածում բարձրանում են ապրանքների եւ ծառայությունների գները, փոխառուի կողմից հետ վերադարձված գումարը ունենում է ավելի փոքր գնողունակություն: Ուստի՝ փոխառու կազմակերպությունները փորձում են գնահատել նաեւ գնաճի հետ կապված ռիսկը եւ այն ներառել վարկային տոկոսադրույքի մեծության մեջ: Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակային ցուցանիշ է սահմանվել 4%-ը, որը կարող է տատանվել 1.5%-ի սահմաններում: 2015թ օգոստոսի համեմատ 2016թ. սեպտեմբերին գնաճի ընթացիկ միտումները կազմել է -1.9%³: Հետեւողական դրամավարկային քաղաքականության արդյունքում տարեկան գնաճը վերջին տարիներին չի գերազանցել նշված սահմանաչափը, իսկ վերջին ժամանակաշրջանում ամկա են նաեւ որոշ

ՀՏԴ 336:332

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հայկ
ՄԱՅԱԿԱՆՅԱՆ
Տնտեսագիտության
դոկտոր

ապրանքատեսակների մասով գնանկման միտումներ: Ֆինանսական համակարգի գնաճային սպասումների միջին մակարդակն առաջիկա մեկ տարում կազմում է 3%: Հետևաբար տնտեսական զարգացումները ենթադրում են ցածր գնաճային միջավայրի պահպանում սույն տարում, որն էլ կարող է ստեղծել նախապայմաններ բանկերի կողմից գնաճի հետ կապված ռիսկի մակարդակի նվազեցման համար՝ այդպիսով ազդելով վարկային տոկոսադրույքի հետագա նվազման վրա:

Նշենք նաև, որ այլ հավասար պայմաններում տոկոսադրույքի մակարդակը իրենից ներկայացնում է վարկային միջոցների առաջարկի և պահանջարկի հարաբերակցություն: Մասնավորապես՝ պահանջարկի մեծացման պարագայում տոկոսադրույքները աճում են և հակառակը, իսկ դրանց նվազեցումը հնարավոր է նաև բանկային համակարգի փողի առաջարկի ավելացման պարագայում, երբ հասարակությունն ավելի հակված է փողը պահել բանկերում, քան տանը: Բանկային համակարգում յուրաքանչյուր բացված հաշվի ավելացում, կարող է նպաստել տոկոսադրույքների նվազեցմանը: Այսպես, օրինակ, 2010-15թթ. ընթացքում, փողի զանգվածի ավելացման հետ մեկտեղ՝ նվազել է շրջանառության մեջ կանխիկ դրամի տեսակարար կշիռը՝ 33.6%-ից նվազելով և հատելով 20% սահմանաչափը: Նշված ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգում աճել են նաև ցայահանջ ավանդները՝ մոտ 45%-ով, ժամկետային ավանդները՝ 300%-ից, իսկ արտարժույթային ավանդները՝ 200%-ից ավելի սահմանաչափերով, որոնք բավականին ավելացրել են բանկի կողմից վարկավորման համար հասանելի միջոցները⁴:

Վարկային տոկոսադրույքի ձեռնարկման գործոնների շարքում կարելի է դիտարկել նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի մեծությունը: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման նպատակով սահմանվող տոկոսադրույքն է: Իհարկե, վերաֆինանսավորման տոկոսադրույքը դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքներից է, որն ուղղված է գների կայունության ապահովմանը, այլ ոչ թե վարկերի տոկոսադրույքների կարգավորմանը: Բայց երկարաժամկետ հատվածում ՀՀ կենտրոնական բանկի վարած քաղաքականությունը կարող է նպաստել նաև վարկային տոկոսադրույքի նվազմանը: Սովորաբար՝ որքան ցածր է կայուն է երկրում գնաճը, այնքան ցածր են լինում նաև տոկոսադրույքները: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի ներկա քաղաքականությունը, որի արդյունքում՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2015թ. 10.5%-ից 2016թ. նվազել է մինչև 6.5%, նպաստավոր պայմաններ է ստեղծում նաև տնտեսական ակտիվության ավելացման համար⁵: Պետք է նշել, որ դրամավարկային պայմանների շարունակական թուլացումը փոխանցման մեխանիզմի միջոցով անդրադառնում է նաև վարկային շուկայի տոկոսադրույքների և ծավալների վրա: Արդյունքում, 2016թ. երկրորդ եռամսյակում շարունակվել է վարկավորման ծավալների ավելացումը, որի աճման միտումը 12-ամսյա կտրվածքով կազմել է 3.8%: Նշենք նաև, որ ՀՀ առևտրային բանկերում 2015թ. 1 տարուց ավելի ժամկետով ՀՀ դրամով վարկերի միջին տոկոսադրույքը կազմել է մոտ 17.3%, իսկ ԱՄՆ դոլարով 11.7%: 2016թ. մինչև հոկտեմբեր ամիսը միեւնույն ցուցանիշները կազմել են՝ համապատասխանաբար 17.5% և 10.6%:

Ընդհանրացնելով, կարելի է փաստել, որ վարկավորման հնարավորությունների ավելացման հետ մեկտեղ՝ ներկայում կարելավում են մի շարք խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Առաջինը վերաբերում է չափաատող վարկերի տեսակարար կշռի աճին: Հաշվի առնելով, որ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը 2015թ. տատանվել է 15%-ի սահմաններում, ակնհայտ է, որ խնդիրը կարգավորվող է և կրում է ժամանակավոր բնույթ: Ուստի՝ վարկերի որակի ժամանակավոր վատացումը չի կարող էական ազդեցություն ունենալ ֆինանսական կայունության վրա, քանի որ ՀՀ բանկերը ապահովում են կապիտալի բավարար համարժեքություն՝ կլանելու վարկային պորտֆելի գծով հնարավոր կորուստները:

- Երկրորդը՝ վարկերի դրվարիզացիայի ներկա մակարդակի հետ կապված հարցն է, և այս երեւույթը գտնվում է հիմնականում ուղիղ համեմատական կապի մեջ արժույթի շուկայի

կայունության հետ: Այս առումով պետք է նշել, որ արժույթի շուկայի կայուն զարգացման ապահովումը, որին միտված են Կենտրոնական բանկի գործողությունները, Էսպես կարող է նպաստել վարկերի դրվարիզացիայի մակարդակի նվազմանը՝ ավելացնելով վստահությունը ՀՀ դրամի հանդեպ և նպաստելով տնտեսության զարգացմանը:

- Երրորդը՝ բիզնեսի վարման էթիկայի, ֆինանսական կրթության մասնագիտական ապահովվածության շարունակական զարգացման անհրաժեշտությունն է՝ հատկապես մարզերում: Շատ կարելի է այն գիտակցումը, որ վարկը ընդամենը հնարավորություն է, այլ ոչ պարտադրանք: Մինչ վարկային միջոցների ձեռք բերումը՝ յուրաքանչյուր անձ պետք է կարողանա առավել սթափ ու իրատեսորեն գնահատել ֆինանսական հնարավորությունները և պարտավորությունները:

- Իսկ ինչ վերաբերում է տոկոսադրույքին, ապա կարելի է նշել, որ չնայած անկա ռիսկերին, ստեղծված են անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀ-ում վարկավորման տոկոսադրույքի հետագա հնարավոր նվազման համար, որն էլ իր հերթին կարող է խթան հանդիսանալ երկարաժամկետ հատվածում տնտեսական ակտիվության, փոքր և միջին ձեռնարկության, ինչպես նաև ներդրումային ծրագրերի ֆինանսավորման և տնտեսական աճի ավելացման համար:

*Ներկայացվել է 18.01.2017թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2017թ.*

1. Ֆինանսական կայունության հաշվետվություն, ՀՀ ԿԲ 2016, էջ 32
2. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2016, էջ 42
3. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, թիվ 9 (217) 2016, էջ 13
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 400
5. Գնաճի հաշվետվություն, ՀՀ կենտրոնական բանկ, 2016, էջ 45